Երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում նա ընդգծեց Հայ Առաքելական Եկեղեցու եւ նրա Հովվապետերի կարեւոր դերակատարությունն ու առաքելությունը:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը նաեւ ի դեմս ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավարի երախտագիտություն հայտնեց Ռուսաստանի իշխանություններին Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված իրենց ջանքերի, ինչպես նաեւ Ռուսաստանի հայ համայնքի նկատմամբ մշտապես դրսեւորվող հոգատար վերաբերմունքի համար: Վերջում Վեհափառը, Հայրապետական իր օրհնությունը բերելով տիար Նարիշկինի գլխավորած պատվիրակությանը, մաղթեց, որ Աստված անխախտ, զորեղ ու առաջընթացի մեջ պահի ու պահպանի երկու ժողովուրդների բարեկամությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 19-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Վրաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլիին:

Ամենայն Հայոց Հայրապետը նորանշանակ դեսպանին մաղթեց արդյունավետ առաքելություն Հայաստանում՝ գոհունակությամբ նշելով, որ երկու երկրների միջեւ հարաբերությունները զարգանում են երկու ժողովուրդների դարավոր բարեկամության ոգուն համահունչ: Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ միջեկեղեցական հարաբերություններին եւ Վիրահայոց թեմի խնդիրներին՝ հույս հայտնելով, որ առկա այդ խնդիրները կգտնեն իրենց պատշաճ լուծումը:

Իր հերթին Վրաստանի դեսպանը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը հանդիպման համար, անդրադարձավ երկու ժողովուրդների բարեկամությանը:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Վրաստանի տնտեսական եւ հոգեւոր կյանքի, ինչպես նաեւ երկու պետությունների համագործակցության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՇՎԵԴԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

Ապրիլի 23-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Շվեդիայի Թագավորության Ռիկսդագի պատգամավորներ, Շվեդիա-Հայաստան բարեկամության խորհրդարանական խմբի

նախագահ Անելի Էնոքսոնին եւ խմբի անդամ Ֆրեդերիկ Մալմին: Պատվիրակությանն ուղեկցում էին ԱԺ պատգամավոր Արամ Սաֆարյանը, Շվեդիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արա Այվազյանը եւ շվեդահայ համայնքների համադրող կենտրոնի խոսնակ Վահագն Ավետյանը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը, ի դեմս Անելի Էնոքսոնի եւ Ֆրեդերիկ Մալմի, երախտագիտություն հայտնեց Շվեդիայի Խորհրդարանին հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձեւի ընդունման, ցուցաբերված արի եւ մարդասեր ոգու համար՝ վստահություն հայտնելով, որ մարդկային կյանքում այսօր էլ տեղ գտնող ոճիրներից ու ողբերգություններից աշխարհը կարող է զերծ մնալ միայն նման մարդասեր մարդկանց եւ երկրների շնորհիվ: «Այս նվիրական օրերին մեծ մխիթարություն է մեր կողքին ունենալ հայոց բյուրավոր նահատակներին իրենց հարգանքը մատուցող աղոթակից օտարազգի բարեկամների», - իր խոսքում նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բերելով իր աղոթքն ու բարեմաղթանքները, որ Տերը պահի ու պահպանի Շվեդիան ու նրա ժողովրդին սիրո, առաջընթացի եւ բարօրության մեջ: Վեհափառ Հայրապետը կարեւորեց նաեւ երկու երկրների միջեւ ձեւավորված բարեկամական սերտ հարաբերությունները եւ փոխադարձ այցելությունները, որոնք առավել մեկտեղելու են ջանքերը հանուն խաղաղ, արդար աշխարհի կայացման:

Շվեդ պատգամավորները խորին շնորհակալություն հայտնեցին ընդունելության համար՝ կիսելով իրենց ջերմ զգացողությունները Հայաստանում եւ մասնավորապես Մայր Աթոռում գտնվելու համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՊՈՏՍԴԱՄԻ ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻՆ

Ապրիլի 27-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Պոտսդամում բացվող Յոհաննես Լեփսիուսի տուն-թանգարանի տնօրեն Հանս Ուլրիխ Շուլցի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով պատվիրակության այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց հյուրերին, որ շարունակում են պրոֆ. Հերման Հոլցի աշխատանքը՝ ի հավերժացումն Հայ դատի պաշտպան, մեծ հումանիստ Յոհաննես Լեփսիուսի հիշատակի:

Հյուրերն ուրախությամբ տեղեկացրեցին Նորին Սրբությանը, որ Լեփսիուսի տուն-թանգարանի բացումը կկատարվի առաջիկա մայիսի 2-ին: